ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ
Հեռախոս 0234-62901

ՈՐՈՇՈՒՄ

«16 » նոյեմբերի **2012**թվականի **N_11**-Ա

## ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Նոր կյանք գյուղի համայնքային սեփականություն հանդիսացող խմելու ջրի 13917,33գծմ /տասը երեք հազար ինը հարյուր տասյոթ մետր, երեսուն երեք սմ/ համակարգերը մինչև 2016թվականի սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության 22.12. 2011թվ. N1851-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագրով ժամանակավոր հանձնել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:
2. Նոր կյանք համայնքի ղեկավար Մ.Աբրահամյանին՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան գրասենյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործընթացը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

Ավագանու անդամներ

կողմ 7/յոթ/ դեմ 0/զերո/ ձեռնպահ 0/զերո/

Աբրահամյան
Ամիրյան
Ա. Բաղդասարյան
Ա. Աբրահամյան
Ա. Հովհաննիսյան
Ս. Հովհաննիսյան
Ե. Տեր Նիկողոսյան

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Մ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ